Նա ետես զայլ մի յարքունիս իւր և
խաչ 'ի վերայ նորա. և հրամայեաց զայն
բառնալ անտի՝ ասելով, մեք քրիստո-
նեայքս 'ի ճակատս և 'ի դէմս մեր դրոշ-
մեմք զսա, որոյ անպատիւ մնալ՝ մեղանք
է մեզ. և բարձին զայն. և միւս ևս եղ 'ի
ներքոյ բարձին, և երևեցաւ անհատ
զանձ 'ի ներքոյ նորա, և որքա՛ն եկաց,
դարձեալ այն մսխելով ոչ պակասեաց:

Մաւրիկոս՝ որ է Մօրիկ՝ սկսաւ յամի
Տեառն Շ.ՁԲ. ինքնակալեալ ամս Ի:
Սա Օշականեցի՝ և Հայ ազգաւ, և խաղա-
ղասէր աշխարհի: Սա եբարձ զռոճիկ զօ-
րացն. որում կուտեալ զօրօքն 'ի վերայ
նորա, և նա փախեալ աննշանացեալ: Յա-
ւուրս սորա գտաւ անկար պատմուճանն
Քրիստոսի 'ի քաղաքն Արփաթ՝ որ է Կա-
փառնայումն, և տարեալ եդին յԵրու-
սաղէմ: Բայց ոմանք՝ ասեն՝ թէ սպանին
զՄօրիկ և զորդիս նորա: Եւ թագաւորն
Պարսից վրէժխնդիր եղև նորա, և ա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան